



# ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԶՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ 2024



## ՆԵՐՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Armenia joined the United Nations on March 2, 1992, and the UN office was established in Yerevan in Հայաստանը ՄԱԿ-ին անդամակցել է 1992 թ. մարտի 2-ին, և նույն տարվա դեկտեմբերին Երևանում հիմնվել է ՄԱԿ-ի գրասենյակը: Դառնալով ՄԱԿ-ի անդամ, Հայաստանն ընդունել է համամարդկային արժեքները, մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության հաստատման սկզբունքները՝ որպես պետական գաղափարախոսության անբաժանելի մաս: Հայաստանն ակտիվորեն մասնակցում է Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում ծավալվող աշխատանքներին և համագործակցում կազմակերպության բազմաթիվ կառույցների և օղակների հետ<sup>1</sup>: ՄԱԿ-ին անդամակցելու ժամանակից ի վեր Հայաստանը ստորագրել և վավերացրել է միջազգային բազմաթիվ պայմանագրեր:

ՄԱԿ-ի հայաստանյան թիմը, որը գլխավորում է ՄԱԿ-ի մշտական համակարգողը, բաղկացած է Հայաստանում գործող և ոչ ռեզիդենտ 20 գործակալություններից: Համաշխարհային բանկը (ՀԲ), Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ) և Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) ևս գրասենյակներ ունեն երկրում<sup>2</sup>:

2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտան «Կայուն զարգացման 2030 թվականի օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակները: Կայուն զարգացման նպատակները հիմնվում են հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) արձանագրած հաջողությունների վրա: Իսկ Հայաստանը, 2021թ.-ին ստորագրեց «Հայաստանի համար ՄԱԿ-ի Կայուն զարգացման գործընկերության 2021-2025 թվականների շրջանակ» փաստաթուղթը, որը սահմանում է ԿԶՆ-ների իրագործման և, ընդհանուր առմամբ, զարգացման ոլորտում Հայաստանի և ՄԱԿ-ի համագործակցության հիմնական առաջնահերթություններն առաջիկա հինգ տարիների համար:

2018 թվականին Հայաստանում տեղի ունեցած թավշյա հեղափոխության արդյունքում նոր կառավարության կողմից ներկայացվել է երկարաժամկետ տրանսֆորմացիոն տեսլական ԿԶՆ-ի ամբողջ շրջանակներում, որում պլանավորված են իրականացնել մի շարք բարեփոխումներ մարդու իրավունքների պաշտպանության, օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի, հանցավոր ենթամշակույթի դեմ պայքարի, պետական կառավարման բարելավման և ռազմավարական պլանավորման ոլորտներում, ինչպես նաև հավակնոտ տնտեսական (ՓՄՁ-ում, արդյունաբերությունում, զբոսաշրջությունում, բիզնես միջավայրում և այլն) և սոցիալական (պետական հատվածի տարբեր աշխատողների (ուսուցիչներ, բժիշկներ, փրկարարներ և այլն) աշխատավարձերի բարձրացում, նպաստների և կենսաթոշակների համակարգի արդյունավետության բարձրացում, նվազագույն կենսաթո-

<sup>1</sup> <https://www.mfa.am/hy/international-organisations/12>

<sup>2</sup> <https://armenia.un.org/hy/about/about-the-un>

շակի չափի ավելացում, առողջապահական ծառայությունների և համապատասխան շահառուների ընդլայնում, կրթական միջավայրի բարելավում և այլն) բարեփոխումներ:

Իհարկե կայուն զարգացման 5P-ների՝ մարդիկ, մոլորակ, բարգավաճում, խաղաղություն, գործընկերություն, շրջանակներում Հայաստանում բազմաթիվ նախաձեռնություններ են իրականացվել, սակայն դեռևս առկա են բազմաթիվ մարտահրավերներ, որոնք պետք է լուծվեն՝ կայուն զարգացումն ամբողջությամբ իրականացնելու համար

Կայուն զարգացման նպատակներին հասնելու նպատակով կառավարությունը մշակել է 2020-2050 թթ. Հայաստանի վերափոխման ռազմավարությունը, որի շրջանակներում սահմանվել է 16 մեզանպատակ, որոնք ամբողջապես ներառված են բոլոր ԿԶՆ-երի (Բացի ԿԶՆ 14-ից), այնպես էլ ԿԶՆ-ների 5 P-երի մեջ<sup>3</sup>:

ՀՀ Վարչապետի 22 ապրիլի 2020 թվականի N 479-Ա որոշման համաձայն ստեղծվել է ՀՀ Կայուն զարգացման նպատակների խորհուրդը, հաստատվել է խորհրդի կազմը և աշխատակազմը, ինչպես նաև Խորհրդում հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների) ներգրավման և ռոտացիայի մրցույթի կազմակերպման կարգը:<sup>4</sup> Ելնելով դրանից, կապված ԿԶՆ-երի վերաբերյալ հանդիպման օրակարգից և քննարկվող հարցերի շրջանակից, խորհուրդների նիստերին կարող են հրավիրվել նաև գործարար հանրույթը, գիտակրթական հաստատություններ, արհմիություններ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ, այլ շահագրգիռ կողմեր<sup>5</sup>:

Բացի այդ, ՄԱԶԾ-ի և ՀՀ Արդարադատության նախարարության կողմից, փորձնական նախագիծ ԿԶՆ նորարարական լաբորատորիայի և Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի աջակցությամբ, իրականանցվել է «Օրենքի գերակայությունը և ԿԶՆ-ները Հայաստանի բարեփոխումների օրակարգում» փորձնական ծրագիրը, որի շրջանակներում՝ նաև ԿԶՆ մոնիթոր հարթակը<sup>6</sup>: Տարբեր համալսարաններում (Երևանի պետական համալսարան, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան և այլն) հիմնվել են ՄԱԿ-ի գրադարաններ:

«Կայուն զարգացման լուծումներ» ցանցի կողմից մշակված «Կայուն զարգացում 2023» զեկույցում Հայաստանը 166 երկրների շարքում 56-րդն է՝ 73.3 միավորով, որը փոքր-ինչ բարձր է տարածաշրջանային միջինից (71,8): Այս դիրքը 2022 թվականի 50-րդ հորիզոնականից մի փոքր անկել է, ինչն արտացոլում է Հայաստանում ԿԶՆ-ի առաջընթացի լճացման մտահոգիչ միտումը: Կովկասյան տարածաշրջանում Հայաստանը պահպանում է մրցակցային դիրք՝ զբաղեցնելով 56-րդ տեղը: Զեկույցում ասվում է, որ Հայաստանը քայլեր է ձեռնարկում ԿԶՆ 6

<sup>3</sup> <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/09/21/Nikol-Pashinyan-meeting-Sept-21/>

<sup>4</sup> <https://www.artis.am/DocumentView.aspx?DocID=145094>

<sup>5</sup> [https://sustainabledevelopment.un.org/content/documents/26318Armenia\\_VNRFINAL.pdf](https://sustainabledevelopment.un.org/content/documents/26318Armenia_VNRFINAL.pdf)

<sup>6</sup> <https://www.sdglab.am/en/sdgs>

(Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ) և ԿԶՆ 10 (անհավասարությունների կրճատում) ուղղությամբ՝ միաժամանակ դիմակայելով կլիմայական գործողությունների (նվազող), սովի վերացման, ամուր առողջության և բարեկեցության, որակյալ կրթության, արժանապատիվ աշխատանքի և տնտեսական աճի, խաղաղության, արդարության և ամուր հաստատությունների հետ կապված մարտահրավերներին: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ԿԶՆ 78-րդ զագաթնաժողովում Հայաստանը վերահաստատեց Հայաստանի նվիրվածությունը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին՝ դրանք ինտեգրելով ազգային քաղաքականության և զարգացման երկարաժամկետ ռազմավարություններին: Չնայած մարտահրավերներին, Հայաստանը հավակնում է մինչև 2030 թվականը բարձրանալ և ամրապնդել իր դերը ԿԶՆ լավագույն 40-յակում: Հայաստանը պարտավորվում է արագացնել ԿԶՆ-ի իրականացումը՝ բարելավելով կրթական համակարգը ներառական և կայուն զարգացումը խթանելու միջոցով և անցում կատարել այնպիսի տնտեսական մոդելի, որն առաջնահերթություն է տալիս կլիմայական գործողություններին և սոցիալական ներառականությանը:

Դրան հասնելու համար Հայաստանը մշակում է Ինտեգրված Ազգային Ֆինանսավորման Շրջանակ (INFF)՝ Զարգացման ֆինանսական գնահատման և ԿԶՆ բյուջետավորման միջոցով՝ պարզեցնելու պետական և մասնավոր ֆինանսական քաղաքականությունները և օգնելու կառավարությանը կատալիզացնել իրենց ազգային զարգացման առաջնահերթություններին և արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ ռեսուրսները՝ 2030 թվականի օրակարգի համատեքստում: Հայաստանի Ինտեգրված Ազգային Ֆինանսավորման Շրջանակը նպատակ ունի ամրապնդել ֆինանսավորման մեխանիզմները ռազմավարական քաղաքականության շրջանակի արդյունավետ իրականացման համար, ուստի այն օգտագործվում է բացահայտելու և կիրառելու նորարարական և ապացույցների վրա հիմնված մեխանիզմներ՝ գործընկերությունները և ֆինանսավորումն ուղղորդելու երեք առաջնահերթ ոլորտներում՝ կլիմայի փոփոխություն, պարենային անվտանգություն և մարդկային կապիտալ:

Չնայած միջազգային ֆինանսական հաստատությունների կարևոր դերին ԿԶՆ-ների ձեռքբերման գործում, Հայաստանը բախվում է զարգացման ֆինանսավորման հասանելիության խոչընդոտների, այդ թվում՝ եկամտաստեղծ ծրագրերի պակասի, ինչպես նաև ծրագրեր իրականացնելու համար սահմանափակ կարողությունների: Զարգացման բանկերի հետ համագործակցության ջանքերը, ինչպիսիք են Ասիական զարգացման բանկը, Համաշխարհային բանկը, նպատակ ունեն հաղթահարել այս մարտահրավերները՝ հեշտացնելով կանաչ ֆինանսավորման նախաձեռնությունները և իրականացնել տեխնիկատնտեսական հիմնավորումներ: Հայաստանը գիտակցում է կայուն զարգացման ֆինանսավորման ավելի հավակնոտ մոտեցման անհրաժեշտությունը՝ հեռանալով ավանդական տնտեսական ոլորտներից, ինչպիսիք են հանքարդյունաբերությունը և դրամական փոխանցումները, դեպի ավելի բազմազան և ճկուն տնտեսական մոդել:

Հայաստանը նվիրված է 2030 թվականի օրակարգում նշված նպատակներն առաջ մղելուն, ընդ որում ՀՀ կառավարությունը ջանքեր է նախաձեռնում Կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ) ինտեգրելու իր ոլորտային բարեփոխումներին, ինչպես նաև դրանք ներառելով ազգային ռազմավարություններում և քաղաքականության փաստաթղթերում:

2019 թվականին ՄԱԶԾ-ի և ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ մեկնարկեց «Օրենքի գերակայությունը և ԿԶՆ-ները Հայաստանի բարեփոխումների օրակարգում» պիլոտային նախաձեռնությունը, որին աջակցում են Հայաստանի Ազգային SDG ինովացիոն լաբորատորիան և Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն: Այս ծրագիրը կենտրոնացած էր Հայաստանի համատեքստում SDG 16-ի գլոբալ ցուցանիշների գնահատման, տվյալների հավաքագրման, հասանելիության և փոխգործունակության վերաբերյալ հետազոտություն անցկացնելու վրա՝ նպաստելու ազգայնացված SDG 16 ցուցանիշների մշակմանը: Մշակվել են նորարարական մեթոդներ՝ հնարավորություն ընձեռելու ԿԶՆ 16-ի համապատասխան թիրախներին համահունչ վիճակագրական տվյալների ավտոմատ հավաքագրումը: Ծրագիրը կենտրոնացած է ԿԶՆ 16-ի չորս առանցքային ոլորտների վրա, մասնավորապես՝ հակակոռուպցիոն միջոցառումներ, դատական և իրավական բարեփոխումներ, մարդու իրավունքների պաշտպանություն և ռազմավարություններ, քրեակատարողական և պրոբացիոն ոլորտները:



### Մեթոդաբանություն

Սույն հաշվետվության համար ուսումնասիրվել են տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված տարբեր աղբյուրներ, ներառյալ՝




- ՀՀ Կառավարության ծրագիրը,
- ՄԱԿ-ի գործակալությունների կողմից հրապարակումները,
- Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված հաշվետվությունները,



- Տարբեր ոլորտային ռազմավարական փաստաթղթեր:

### ԿԶՆ-ի իրականացման գործընթացները

ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները համընկնում են ՀՀ զարգացման ռազմավարական նպատակների և մոտեցումների հետ, ու դրանց իրականացումը կապահովի Վերափոխման Ռազմավարության մեջ ամրագրված 16 մեզանպատակները: ԿԶՆ-ները և դրանց թիրախները Հայաստանում հիմնականում համապատասխանում են ռազմավարական պլանավորման և դրանց իրականացման գործընթացներին:

Կայուն զարգացման նպատակների իրականացումն ու փոխգործակցությունը ներկայացնելու համար այս զեկույցում ուսումնասիրվել են 5 սկզբունքները:

| Հ/հ | Սկզբունքներ        | Համառոտ նկարագրություն  | SDG  | Ոլորտը        |
|-----|--------------------|---|--|---------------|
| 1.  | <b>Մարդիկ</b>      | Մարդկային կապիտալի զարգացում<br>-----<br>Վերջ տալ աղքատությանը և սովին, ապահովել արժանապատվություն և հավասարություն առողջ միջավայրում |   | Սոցիալական    |
| 2.  | <b>Բարգավաճում</b> | Ենթակառուցվածքների մատչելիություն և տնտեսական աճի ապահովում<br>-----<br>Ապահովել բնության հետ ներդաշնակ բարեկեցիկ և լիարժեք կյանք     |  | Տնտեսական     |
| 3.  | <b>Սուղորակ</b>    | Շրջակա միջավայրի պաշտպանություն և կլիմայի փոփոխության մեղմացում<br>-----<br>Պաշտպանել մուլտրակը, բնական ռեսուրսները և կլիման          |  | Բնապահպանական |

|    |                         |  |   |                                       |
|----|-------------------------|--|---|---------------------------------------|
| 4. | <b>Խաղաղություն</b>     | <p>Պայքար կոռուպցիայի դեմ, մարդու իրավունքների պաշտպանություն և արդարադատություն</p> <p>-----</p> <p>Խթանել խաղաղ և ներառական հասարակությանը</p> |  | Խաղաղության և գործընկերության խթանում |
| 5. | <b>Գործընկերություն</b> | <p>Համագործակցություն կայուն զարգացման նպատակների իրականացման համար</p> <p>-----</p> <p>Իրականացնել օրակարգը գլոբալ գործընկերության միջոցով</p>  |  |                                       |

# ՄԱՐԴԻԿ

## Մարդկային կապիտալի զարգացում



Հայաստանը խիստ կարևորում է մարդկային կապիտալի զարգացումը, որն ամրագրված է ինչպես սահմանադրությունում, այնպես էլ ՀՀ Կառավարության 2021-2026 թ. ծրագրում և Հայաստանի վերափոխման Ռազմավարությունում (2050):

ՀՀ կառավարության 2021-2026 թվականի ծրագրով նախատեսված տնտեսության և տնտեսական աճի ներուժի բարձրացմանն ուղղված քաղաքականության և դրանցից բխող միջոցառումների պայմաններում 2023 թվականին Հայաստանի ՀՆԱ-ն գրանցել է 8.7% աճ :

### Աղքատության վերացման մասով

Չնայած վերջին տարիներին Հայաստանում աղքատության մակարդակի շարունակական նվազմանը, աղքատությունը շարունակում է մնալ երկրի սոցիալական քաղաքականության լուրջ մարտահրավեր: Աղքատության դեմ հնարավոր չէ պայքարել միայն պետական կառավարման միջոցներով: Այն պահանջում է բնակչության, սփյուռքի և միջազգային գործընկերների ջանքերի համատեղումը:

Աղքատության միջազգային շեմից ցած ապրող բնակչության համամասնությունը ըստ աշխարհագրական վայրի (քաղաքային/գյուղական) 2022 թ.-ին կազմել է 0.8 %, ընդ որում քաղաքային բնակավայրերում՝ 0.4 %, իսկ գյուղական բնակավայրերում այն կազմել է 1.4 %:


Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2022 թվականին աղքատության միջին մակարդակը գնահատվել է 24.8 տոկոս՝ 2021 թվականի ցուցանիշի (26.5 %) համեմատ նվազելով 1.7%-ային կետով, իսկ 2019 թ.-ի ցուցանիշի (26.4 %) համեմատ՝ 1.6%-ային կետով<sup>7</sup>, որը շատ փոքր ձեռքբերում է: 2022 թ.-ին ծայրահեղ աղքատ բնակչությունը կազմել է 1.2 %:

2019-2022 թվականներին քաղաքային և գյուղական համայնքներում աղքատության մակարդակը նվազել է համապատասխանաբար 0.1 և 4.3 տոկոսային կետով: Մայրաքաղաք Երևանում աղքատության մակարդակն ավելացել է 4.4 տոկոսային կետով, իսկ

<sup>7</sup> [https://armstat.am/file/article/poverty\\_2023\\_a\\_2.pdf](https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf)



հանրապետության այլ քաղաքներում աղքատության մակարդակն ընդհանուր առմամբ նվազել է 5.3 տոկոսային կետով:



Աղքատության ազգային շեմից ցած ապրող բնակչության համամասնությունը՝ ըստ սեռի և տարիքային խմբի, %

Համաձայն վիճակագրական ծառայության տվյալների, 0-5 և 6-9 տարեկան երեխաների, ինչպես նաև 65 + տարեկան տարեցների աղքատության մակարդակն ավելի բարձր է, քան մյուս տարիքային խմբերում, և նրանք շարունակում են մնալ ամենախոցելի խմբերը: 2020 թվականին մանկական աղքատության մակարդակը եղել է 33.9 %<sup>8</sup>:


Հայաստանում, որպես միջինից բարձր եկամուտ ունեցող երկիր, աղքատության միջազգային գիծը սահմանված է 6.85 ԱՄՆ դոլարը: ????? (միգուցե պիտի գրվեր՝ «սահմանված է օրական 6.85 ԱՄՆ դոլարը») Աղքատությունը և գործազրկության բարձր մակարդակը, սոցիալական ներառվածության պակասի հետ մեկտեղ, արտաքին միգրացիայի բարձր մակարդակի հիմնական պատճառներից մեկն է, որն ազդում է ոչ միայն տնտեսական, այլև ժողովրդագրական իրավիճակի վրա:

2023 թ. պետական բյուջեում ըստ ծախսերի գործառական դասակարգման խմբերի առաջատարը սոցիալական ծառայության գծով ծախսերն են՝ 40,6 %, որի մեջ մտնում են

8

<https://www.unicef.org/armenia/media/15571/file/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF%D5%AB%20%D5%BE%D5%A5%D6%80%D5%AC%D5%B8%D6%82%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf>

առողջապահության, հանգստի, մշակույթի և կրոնի, կրթության և սոցիալական պաշտպանությանն ուղղված բոլոր տեսակի ծախսերը:



Աղքատության միջազգային շեմից ցած ապրող բնակչության համամասնությունն ըստ աշխարհագրական վայրի (քաղաքային/գյուղական), %<sup>9</sup>

Ջինիի գործակիցը ցույց է տալիս, որ եկամուտների համախառն անհավասարությունը 2021 թ.-ին 0,364-ից հասել է 0,352-ի 2022-ին, մինչդեռ սպառման ագրեգատի անհավասարությունը 2021-ին 0,232-ից հասել է 0,239-ի 2022-ին:

Սպառման ագրեգատի և եկամուտների անհավասարությունը, 2021-2022 թթ.-ին<sup>10</sup>

| Ջինիի գործակից | Սպառում |         | Եկամուտ |         |
|----------------|---------|---------|---------|---------|
|                | 2021 թ. | 2022 թ. | 2021 թ. | 2022 թ. |
|                | 0,232   | 0,239   | 0,364   | 0,352   |

Ջինիի 0.352 ինդեքսը ցույց է տալիս եկամուտների համեմատաբար հավասար բաշխվածությունը հասարակության մեջ, սակայն տարածական և գենդերային անհավասարությունները շարունակում են բաժանումներ ստեղծել տղամարդկանց և կանանց, ինչպես նաև գյուղական և քաղաքային բնակավայրերի բնակչության միջև: Ֆինանսավորման, արդյունավետ ծածկույթի, նպաստների և սոցիալական ծառայությունների համարժեքության առումով զգալի բացեր կան: Դրան զուգահեռ տարբեր դրամական նպաստների, սոցիալական


<sup>9</sup> <https://sdg.armstat.am/am/1-1-1/>

<sup>10</sup> [https://armstat.am/file/article/poverty\\_2023\\_a\\_2.pdf](https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf)

ծառայությունների և զբաղվածության ծառայությունների մասնատված վարչարարությունն ավելի է բարդացնում ծածկույթի բացերը:

### Մովի վերացման մասով

Համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թթ. ռազմավարության, մեկ գյուղացիական տնտեսության ստեղծած արժեքը 2029 թ.-ին, 2018 թ.-ի հետ համեմատ, եռապատկվելու է և կազմի 7,45 մլն դրամ<sup>11</sup>: Մեկ գյուղացիական տնտեսության միջին եկամուտը Հայաստանում 2024 թվականին ակնկալվում է հասցնել 2,0 մլն դրամ, իսկ 2029 թվականին՝ 5 մլն դրամ:



Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունը, բազմամյա տնկարկների և վարելահողերի տարածությունները, 1000 հա<sup>12</sup>

ՀՀ-ի զբաղված բնակչության ավելի քան 43 %-ը գյուղական համայնքներում է, զբաղված գյուղական բնակչության 47 %-ը՝ գյուղատնտեսության ոլորտում: Այնուամենայնիվ, ոլորտն ունի ամենացածր ամսական միջին աշխատավարձի դրույքաչափերը: Գյուղատնտեսության արտադրողականության նվազման և հողօգտագործման վատ կանոնակարգված մեխանիզմների, կլիմայական վտանգների և ռիսկերի նկատմամբ բարձր խոցելիության,

<sup>11</sup> <https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf>

<sup>12</sup> <https://sdg.armstat.am/am/2-4-1-a/>

անկայուն գործելակերպի, ներդրումների, կարողությունների, ենթակառուցվածքների պակասի և նորարարության ու տեխնոլոգիական բարելավման դանդաղ տեմպերի, ինչպես նաև ներդրումների ներմուծումից մեծ կախվածության պատճառով, գյուղատնտեսությունը բարձր ռիսկային, ցածր եկամտաբեր և անկայուն եկամտի աղբյուր է գյուղական բնակչության համար:

2023 թվականի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը շուրջ 948 մլրդ դրամ է, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 99.7 %, այդ թվում՝ բուսաբուծության համախառն արտադրանքի ծավալը կազմել է շուրջ 447, 6 մլրդ դրամ, իսկ անասնաբուծությանը՝ շուրջ 500,4 մլրդ դրամ:

Ներկայումս գյուղատնտեսության ոլորտում իրականացվում են մեկ տասնյակից ավելի պետական աջակցության ծրագրեր, որոնց հիմնական նպատակը գյուղատնտեսությունում կապիտալ ներդրումների ծավալների ավելացումն է, արտադրական հզորությունների ընդլայնումը, արդիական տեխնոլոգիաների ներդրումն ու գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների կայունացումը:



### Մարդկանց առողջության և բարեկեցության մասով

Հայաստանի առողջապահության ոլորտը բախվում է մի շարք մարտահրավերների, որոնք ազդում են առողջապահական ծառայությունների որակի և հասանելիության վրա: Չնայած վերջին տարիներին իրականացված առողջապահության ոլորտի բարելավմանը, 2023 թվականին (????? դարձյալ հին՝ 3-4 տարի առաջվա տվյալ էք օգտագործել) բնակչի անձնական միջոցներով կատարվող ծախսերը կազմում են առողջապահական ծախսերի մոտ 78 %-ը, իսկ առաջնային բուժօգնության այցելությունների որակը դեռևս միջինից ցածր է, ինչպես արձանագրված է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից:

Սա մասամբ վերագրվում է առողջության խնամքի որակի հետ կապված խնդիրներին, երբ անհատների մեծ մասը նախընտրում է իրականացնել ինքնուրույն բուժում՝ պրոֆեսիոնալ

բժշկական օգնություն ստանալու փոխարեն: Այս մարտահրավերներին դիմակայելը պահանջում է բազմակողմ մոտեցում՝ առողջապահական ընդհանուր մատուցումը բարելավելու և առողջապահական ավելի լավ արդյունքներ ապահովելու համար: Ցավոք առողջապահական ոլորտը անբավարար է ֆինանսավորվում, ինչը սահմանափակում է բարձրորակ առողջապահական ծառայությունների արդար հասանելիությունը: Առողջապահության բարեփոխումների իրականացման Կառավարության 2023–2026 թվականների ռազմավարությունը նախատեսում է մինչև 2026 թվականը առողջապահական ծախսերի կայուն աճ՝ բյուջեի նվազագույնը 10 %-ի և ՀՆԱ-ի 2,5 %-ի չափով: 2026 թ.-ին առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի ներդրումը կարևոր քայլ կլինի առողջապահության որակը բարձրացնելու համար, որը կնպաստի առողջապահության ֆինանսավորման կայունացմանը, քաղաքացու գրպանից ծախսերի նվազեցմանը, բարձրորակ բուժօգնության հասանելիության խթանմանը և բնակչության ֆինանսական պաշտպանվածության բարելավմանը: Առողջապահական ծառայությունների մատչելիությունն ու որակը բարելավելու նպատակով կառավարությունը նախաձեռնել է առողջապահական ոլորտի համապարփակ բարեփոխումներ՝ առողջապահության ոլորտում առկա մարտահրավերները դիմակայելու և առաջացող խնդիրները լուծելու համար:

Սրտանոթային հիվանդություններին, քաղցկեղին, շաքարային դիաբետին կամ շնչուղիների քրոնիկական հիվանդություններին վերագրվող մահացությունների թիվը, 100 հազար բնակչի հաշվով<sup>13</sup>


| Տարի | Սրտանոթային հիվանդություն | Քաղցկեղ | Շաքարախտ | Քրոնիկ շնչառական հիվանդություն |
|------|---------------------------|---------|----------|--------------------------------|
| 2019 | 245.6                     | 187.1   | 13.3     | 12.5                           |
| 2020 | 289                       | 178.5   | 11.9     | 10                             |
| 2021 | 278.7                     | 173.8   | 9.3      | 10.8                           |
| 2022 | 242.8                     | 169.2   | 10.1     | 7.3                            |

Աղյուսակի վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ վարակիչ թվարկված հիվանդություններից մահացությունների թիվը կայուն կերպով նվազում է: (????? դարձյալ բացակայում է 2023 թվականի ցուցանիշը)

Համաձայն ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2019-2022 թվականներին մայրական մահացության դեպքերը կազմել են միջինը 30՝ 100 հազար կենդանածնի հաշվով<sup>14</sup>,


<sup>13</sup> <https://sdg.armstat.am/am/3-4-1/>

<sup>14</sup> <https://sdg.armstat.am/am/3-1-1/>



Մայրական մահերը 100 000 կենդանաձնի հաշվով (միջին եռամյա ցուցանիշ), 100,000 կենդանաձնի հաշվով

Համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հրապարակված արդյունքների, «Մայրական մահացության դեպքերի մասով 2023 թ. արձանագրվել է ցուցանիշի 11 տոկոսով նվազում՝ 2022 թ.-ի հետ համեմատ<sup>15</sup>:




Երեխաների, մինչև 5 տարեկան երեխաների և մանկական մահացության մակարդակները, 1,000 կենդանաձնի հաշվով

<sup>15</sup> <https://armenpress.am/arm/news/1134517.html>

2019-2022 թթ. ժամանակահատվածում նկատվել է նորածնային մահացության կայուն նվազում, սակայն պահպանվել է մինչև հինգ տարեկան երեխաների մահացության մակարդակը: Մանկական մահացությունների մակարդակը ևս ուսումնասիրվող տարիների ընթացքում նվազել է:

2020-2022 թթ-ին բռնկված Կորոնավիրուսային վարակից (COVID-19) Հայաստանում մահացությունը կազմել է 9799 մարդ, որից 2020 թ.-ին՝ 3545, 2021 թ.-ին՝ 5442 և 2022 թ.-ին այն նվազել է և կազմել է ընդամենը 812 մարդ:



Կորոնավիրուսային հիվանդություններից մահացության դեպքերը ՀՀ-ում, 100 հազար բնակչի հաշվով

ՀՀ Կառավարությունը լայնածավալ աշխատանք է իրականացնում առողջապահության համակարգի բոլոր ոլորտում, որոնք ներառում են, բայց չեն սահմանափակվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, հեպատիտ Բ-ի, լեռշմանյոզի և այլ հիվանդությունների համաճարակների կանխարգելմանը և վերացմանը: Կառավարությունն աշխատանքներ է տանում նվազեցնելու վաղաժամ մահացությունը ոչ վարակիչ հիվանդություններից՝ կանխարգելման և բուժման միջոցով:

Հայաստանում ինքնասպանության հետևանքով մահացության ցուցանիշներն աճել են, 2022 թ.-ին կազմելով 6,3՝ 2019 թ.-ի 5,2-ի փոխարեն (100 հազար բնակչի հաշվով):


Հայաստանում ներկայումս կարևորագույն խնդիր է համարվում ճանապարհատրանսպորտային պատահարների թվի կրճատումը: Տարբեր վերլուծական աղբյուրները ցույց են տալիս, որ ավտոմեքանիքների զոհերի թվով Հայաստանը Եվրոպայում ամենավատ ցուցանիշով երկրներից

մեկն է: 2019 թ.-ի համեմատ (341 գոհ), 2022 թ.-ին Հայաստանում արձանագրվել է 5,8 %-ով պակաս՝ 321 ճանապարհատրանսպորտային պատահարի գոհ:

Հայաստանում 1,7 անգամ նվազել է նաև սոցիալ-կենցաղային թունավորման դեպքերից զոհերի թվաքանակը, որը բացատրվում է կենսապայմանների լավացման և քաղաքացիների կողմից սանիտարահիգիենիկ կարգի պահպանմամբ:

### ՈՐԱԿՑԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ

Հայաստանը հստակ քայլերով առաջ է ընթանում Կառավարության կողմից մշակված վերափոխման Ռազմավարության մեջ ամրագրված մեզանպատակներին համահունչ, որոնցից առաջինը վերաբերում է կիրթ և կարողունակ ազգ ու քաղաքացի ունենալուն: Հայաստանը մեծ նշանակություն է տալիս կրթությանը և փորձում է աշխարհին հասցնել բոլոր նորարարությունները, որոնք ստեղծված են մեր երկրում, որը փոքր է, բայց մարդկային կապիտալով հարուստ:



Երեխաների մասնաբաժինը տարրական դպրոցն ավարտելիս, ովքեր ձեռք են բերել առնվազն գիտելիքների նվազագույն մակարդակ ընթերցանությունից և մաթեմատիկայից<sup>16</sup>

Դրա լավագույն օրինակներից է Թումո նորարարական կենտրոնի և մասնաճյուղերի բացումը Երևանում և մարզերում, Արմաթ ինժեներական լաբորատորիաների հիմնումը, ԿՈԱՖ կենտրոնի հիմնումը Լոռիում, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի հիմնումը, ԱՅԲ դպրոցի, Դիլիջանի միջազգային դպրոցի բացումը և այլն: Կարևոր նախաձեռնություն էր նաև

<sup>16</sup> <https://sdg.armstat.am/am/4-1-1b/>



«Դասավանդիր Հայաստան» ծրագիրը, որի շրջանակներում շրջանավարտները հնարավորություն են ունենում դասավանդել Հայաստանի հեռավոր գյուղերում:

Չնայած դրան, Հանրակրթական դպրոցների աշակերտների թվաքանակը 1 համակարգչի հաշվով ինչպես 2019, այնպես էլ 2022 թ. կազմել է մոտ 16,9: Սա ցուցանիշ է, որը ցույց է տալիս, որ դպրոցներում համակարգիչների թարմացում վերջին տարիների ընթացքում տեղի չի ունեցել<sup>17</sup>:

Հայաստանում դեռևս աշխատանքներ կան իրականացնելու սեռային հավասարության տեսակետից: Ցուցանիշները ցույց են տալիս, որ տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը կրթական մակարդակներում տարբեր է<sup>18</sup>:

Սեռային հավասարության ցուցանիշը, %

| Տարի | Տարրական | Հիմնական | Ավագ | Միջնակարգ | Միջին մասնագիտական | Բակալավր | Մագիստր |
|------|----------|----------|------|-----------|--------------------|----------|---------|
| 2019 | 1.01     | 1.01     | 1.19 | 1.04      | 1.24               | 1.27     | 2.24    |
| 2020 | 1.01     | 1.01     | 1.2  | 1.04      | 1.18               | 1.27     | 2.36    |
| 2021 | 1.01     | 1.01     | 1.21 | 1.04      | 1.17               | 1.35     | 2.21    |
| 2022 | 1.01     | 1.01     | 1.22 | 1.04      | 1.19               | 1.46     | 1.95    |

Հայաստանում խնդիր է նաև համախառն ընդգրկվածությունը ինչպես նախադպրոցական հաստատություններում, այնպես էլ՝ հանրակրթական հիմնարկներում: Ցանկալի է, որ կառավարությունն ավելի հետևողականորեն պարտադրի ենթակառուցվածքային չափանիշների կիրառումը, քանի որ Հայաստանում շարունակում է զգալի չափով չլուծված ժնջված հաշմանդամություն ունեցող երեխաների համար հանրակրթական դպրոցների ֆիզիկական հասանելիության խնդիրը:


Յունիսեֆի կողմից իրականացված հարցումները ցույց են տալիս, որ իբրև դպրոց չհաճախելու հիմնական պատճառ 2020 թվականին աղքատ երեխաների 4.0 %-ը, իսկ ծայրահեղ աղքատների 20.7 %-ը նշել են շատ թանկ լինելը կամ ստիպված աշխատելը<sup>19</sup>:

<sup>17</sup> <https://sdg.armstat.am/am/4-4-1-a/>

<sup>18</sup> <https://sdg.armstat.am/am/4-5-1-a/>

<sup>19</sup>

<https://www.unicef.org/armenia/media/15571/file/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF%D5%AB%20%D5%BE%D5%A5%D6%80%D5%AC%D5%B8%D6%82%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf>



Համախառն ընդգրկվածության ցուցանիշը կրթական համակարգում, %

Կորոնավիրուսի համավարակի ընթացքում կրթական համակարգն անցում կատարեց հեռավար ուսուցման: Յունիսեֆի կողմից իրականացված հետազոտությունները ցույց են տվել, որ համավարակի ընթացքում տնային տնտեսությունների 13.8 %-ում դպրոցահասակ երեխաները չեն մասնակցել հեռավար դասերին, որոնցից 88 %-ը՝ տեխնիկական միջոցների բացակայության պատճառով: Միաժամանակ, հաշմանդամ երեխա ունեցող տնային տնտեսությունների 28.6 %-ում երեխաները համավարակի ընթացքում չեն մասնակցել հեռավար դասերին: Քովիդ-19 համավարակն ակնառու ցուցադրեց կրթական համակարգի անպատրաստվածությունը հեռավար ուսուցմանը՝ սկսած համացանցին և համակարգիչներին հասանելիությունից մինչև առցանց կրթական բովանդակության, օրենսդրական կարգավորման և թվային ուսուցում մշակող ու մատուցող մասնագետների առկայությունը: Բովանդակության առումով e-school Armenia առցանց հարթակի գործարկումը նշանակալի դրական զարգացում է, թեպետ դեռ շատ անելիք կա բարձրորակ բովանդակություն ապահովելու համար:

Բարձրագույն կրթության արդյունավետ կազմակերպման և իրականացման համար ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 585-Ա որոշմամբ ստեղծվել է «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը, որը հնարավորություն է տալու Երևանի, մարզերի և արտերկրի ուսանողների և աշխատակիցների համար իրենց մասնագիտական գործունեությունը ծավալել արժանապատիվ պայմաններում՝ հնարավորինս տրամադրվելով անմիջական

գործունեության մեջ առավելագույնս ներդրվելուն և զերծ լինելու պայմաններում այլ տեսակի լոգիստիկ խնդիրներից: Քաղաքը նաև իր կենտրոնացվածության և հասանելիության շնորհիվ հնարավորություն է տալու միջոցառումներ անցկացնելու համար: Ակադեմիական քաղաքի կոմպակտության շնորհիվ նախապայմաններ կստեղծվեն փորձարարական մշակույթների և նախատիպավորման համար խոշոր ենթակառուցվածքների կառուցման համար: Ակադեմիական քաղաքի տարածքները նախատեսվելու են այն տրամաբանությամբ, որ հնարավորություն ունենան ֆիզիկապես տեղակայելու մինչև 16 բուհ՝ օրենքով նախատեսված մինչև 8 պետական խոշորացված բուհեր և մինչև 8 մասնավոր կամ միջազգային բուհեր: Այս պահին հայեցակարգում մանրամասն նկարագրված են չորս կլաստերներ՝ տեխնոլոգիական, արհեստների, կրթական և սպայական: Ծրագրի ժամանակացույցը երեք փուլ ունի՝ նախագծման փուլ, որը սկսվել է 2023 թվականի հոկտեմբերից և կավարտվի 2025 թվականի սեպտեմբերին, կառուցման փուլ՝ կսկսվի 2025 թվականի հոկտեմբերից և նախնական գնահատմամբ՝ կավարտվի 2029 թվականի դեկտեմբերին<sup>20</sup>:

---

<sup>20</sup> <https://escs.am/am/news/18695>

# ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Մատչելի և մաքուր էներգիա, արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ, արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածքներ, կրճատված անհավասարություններ



Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել բարգավաճման հասնելու ուղղությամբ. Վերջին տարիներին երկիրը ցույց է տվել ուժեղ տնտեսական աճ՝ կենտրոնանալով աշխատատեղերի ստեղծման, աղքատության նվազեցման և կայուն տնտեսական զարգացման խթանման վրա:

Բարգավաճման առանցքային ասպեկտներից մեկը բոլորի համար արժանապատիվ և արդյունավետ աշխատանքի հնարավորությունների ստեղծումն է՝ հատկապես երիտասարդների և կանանց համար: Հայաստանն այս ոլորտում առաջընթաց է գրանցել՝ ներդրումներ կատարելով կրթության և մասնագիտական ուսուցման ծրագրերում՝ իր աշխատուժի հմտությունները բարձրացնելու համար: Երկիրը նաև կենտրոնացել է աշխատաշուկայի պայմանների բարելավման և ձեռներեցության խթանման վրա՝ ավելի ներառական և կայուն տնտեսություն ստեղծելու համար:

## Վերջին տնտեսական զարգացումները

2022 թվականին Հայաստանը տպավորիչ տնտեսական աճ գրանցեց՝ դառնալով Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ամենաարագ զարգացող երկիրը: 12,6% աճի տեմպերով այս էքսպանսիան նպաստել է միգրանտների, բիզնեսի և կապիտալի ավելացման հետևանքով Ռուսաստանի ներխուժմանը Ուկրաինա: Այս դրական թափը շարունակվել է 2023 թվականի առաջին կիսամյակում՝ ՀՆԱ-ի երկնիչ աճի տեմպով 10,5% (SS) իրական արտահայտությամբ: Ինչպես 2022 թվականին, ծառայությունների ոլորտը, մասնավորապես SS, առևտրի և տրանսպորտի ոլորտները, նշանակալի դեր են խաղացել այս աճի խթանման գործում:

Պահանջարկի կողմից 2023 թվականի առաջին կիսամյակում աճի հիմնական շարժիչ ուժերն են եղել մասնավոր սպառումը և ներդրումները: Գնաճը 2022 թվականի 8,6%-ից իջել է մինչև 3,1% 2023թ.

Հայաստանի բյուջեն 2023 թվականի առաջին կիսամյակում ցույց է տվել կանխատեսվող ՀՆԱ-ի 1,4%-ի հավելուրդ՝ գերազանցելով ՀՆԱ-ի 1%-ի ծրագրված դեֆիցիտը, որը հիմնականում պայմանավորված է հարկային եկամուտների հավաքագրման 6%-ով

գերակատարումներով: Այսպիսով, Հայաստանի պետական պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ շարունակել է նվազել՝ մինչև 2023 թվականի հուլիսի վերջը կազմելով տարեկան ՀՆԱ-ի կանխատեսվող շուրջ 44%-ը:

2023 թվականի առաջին կիսամյակում ապրանքների և՛ արտահանման, և՛ ներմուծման անը պահպանվել է կայուն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ԱՄՆ դոլարի արժեքով աճելով 73 տոկոսով՝ հիմնականում դեպի Ռուսաստան արտահանման փոփոխման հաշվին: Առևտրային հաշվեկշռի վատթարացումը մասամբ փոխհատուցվել է նույն ժամանակահատվածում զբոսաշրջիկների ժամանումների թվի 70% աճով: Այնուամենայնիվ, 2023 թվականի առաջին կիսամյակում դրամը շարունակել է արժեւորվել: Ակնկալվում է, որ 2023 թվականին անը կթուլանա մինչև 6,6 տոկոս: Միջնաժամկետ հեռանկարում կանխատեսվում է, որ անը հետագայում կչափավորվի՝ միջինը 4,3 տոկոս 2024-2025 թվականներին: Ակնկալվում է, որ միջնաժամկետ կտրվածքով միջին գնաճը կմոտենա թիրախային 4%-ին:

2022-2023 թվականներին գրանցված շարունակական ուժեղ տնտեսական աճի շնորհիվ աղքատությունը 2021 թվականին 51,7%-ից կնվազի մինչև 37,6% 2023 թվականին՝ չափված վերին միջին եկամուտ ունեցող երկրների աղքատության գծով՝ օրական 6,85 ԱՄՆ դոլար:

Հղում ստորև բերված աղյուսակին, որը ցույց է տալիս Հայաստանում տարեկան տնտեսական աճի տեմպերը.

### Time series

Absence of monthly data means, that the indicator is summarized on the quarterly, half-annual and annual basis.

#### Indicator

Indicator of economic activity, %

#### Indicator of economic activity, % / 2024

| Time Period                    | absolute value | in comparison with same period of last year (%) | in comparison with previous period (%) |
|--------------------------------|----------------|---|--|
| January                        | -              | 110.8   | 53.2                                   |
| February                       | -              | 116.7   | 111.3                                  |
| March                          | -              | 115.3   | 110.4                                  |
| April                          | -              | 110.4   | 99.9                                   |
| From the beginning of the year | -              | 113.2   | -                                      |

#### Time series

| year | absolute value | in comparison with same period of last year (%) |
|------|----------------|---|
| 2023 | -              | 109.8   |
| 2022 | -              | 114.2   |
| 2021 | -              | 105.8   |
| 2020 | -              | 92.5  |
| 2019 | -              | 107.8   |

Հայաստանը նաև հաջողակ է օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու հարցում, որի ներհոսքը 2023 թվականին հասել է 262,6 միլիոն դոլարի: Երկրի ռազմավարական դիրքը, հմուտ աշխատուժը և մրցակցային հարկային քաղաքականությունը այն գրավիչ վայր են դարձրել ներդրողների համար, ովքեր ցանկանում են ընդլայնել իրենց գործունեությունը:

Հայաստանում նույնպես բարելավվել է աղքատության մակարդակը, որտեղ աղքատության գծից ցածր ապրող մարդկանց տոկոսը 2008-ի 29,4%-ից նվազել է մինչև 22,7% 2023-ին:

Աղքատությունը բազմաչափ է և կարող է չափվել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մոտեցումներով: Հայաստանում 2023 թվականի բարեկեցության գնահատականները, որոնք հիմնված են սուբյեկտիվ ընկալումների վրա (այսինքն՝ անհատների անձնական դատողությունը սեփական կենսամակարդակի վերաբերյալ) 3,0 անգամ ցածր են եղել օբյեկտիվ չափման միջոցով ստացվածներից (աղքատության մակարդակի գնահատումները համապատասխանաբար 8,4% և 24,8%): Հարցված տնային տնտեսությունների միայն 1.0%-ն է իրեն գնահատել որպես ծայրահեղ աղքատ, ինչը մոտ է ծայրահեղ աղքատության մակարդակին, որը չափվում է մեկ չափահասին համարժեք սպառման միջոցով (1.2%):

|        | Կենցաղային պայմանների սուբյեկտիվ գնահատում |      |              |       |               |         |
|--------|--|------|--------------|-------|---------------|---------|
|        | Ծայրահեղ աղքատ                             | Խեղճ | Միջինից ցածր | Միջին | Միջինից բարձր | Հարուստ |
| 2021 թ | 0.8  | 9.7  | 40.3         | 46.4  | 2.8           | 0.1     |
| 2022 թ | 0.6  | 9.5  | 42.5         | 43.4  | 3.8           | 0.2     |
| 2023 թ | 1.0  | 8.4  | 39.5         | 47.8  | 3.2           | 0.1     |

Հայաստանը քայլեր է կատարել կրթության մատչելիության բարելավման ուղղությամբ: Տարրական կրթության մեջ ընդգրկվածության զուտ մակարդակը 2008-ի 89,2%-ից աճել է մինչև 92,6% 2023-ին:

Երկիրը առաջընթաց է գրանցել նաև գենդերային հավասարության հարցում: Գենդերային աշխատավարձերի տարբերությունը 2008-ի 15,6%-ից նվազել է մինչև 12,7% 2024-ին: Դրա հնարավոր լուծումը ներառում է ցածր վարձատրվող գործունեության մեջ կանանց համար հմտությունների զարգացման ծրագրերի իրականումը, խնամքի ծառայությունների ընդլայնումը և ծնողական արձակուրդի հնարավորությունները՝ աշխատանքը և ընտանիքը հավասարակշռելու համար: Կյանքը՝ առանց տնտեսական գործունեության զիջելու, ղեկավար և որոշումներ կայացնող պաշտոններում կանանց ներկայության ավելացում:

Շրջակա միջավայրի կայունության առումով Հայաստանը անտառածածկ տարածքների մասնաբաժինը 2010թ.-ի 10,7%-ից 2023թ.-ին ավելացրել է 11,7%-ի:

Հայաստանը նաև քայլեր է կատարել կայուն տնտեսական աճի և դիվերսիֆիկացիայի խթանման ուղղությամբ: Երկիրը կենտրոնացել է իր գյուղատնտեսության,

գրոսաշրջության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների զարգացման վրա, ինչպես նաև նորարարության և ձեռներեցության խթանման վրա: Հայաստանը նաև բարեփոխումներ է իրականացրել բիզնես միջավայրի բարելավման և օտարերկրյա ներդրումների ներգրավման ուղղությամբ:

Չնայած այս ձեռքբերումներին, Հայաստանը դեռևս բախվում է մարտահրավերների՝ հասնելու ԿԶՆ-ի բարգավաճմանը: Երկիրը շարունակում է պայքարել գործազրկության բարձր մակարդակի հետ, հատկապես երիտասարդների շրջանում, և եկամուտների անհավասարությունը մնում է կարևոր խնդիր: Բացի այդ, Հայաստանը բախվում է շարունակական մարտահրավերների՝ կապված անվտանգության, անվտանգության, կառավարման և անբավարար ենթակառուցվածքների հետ:

Առաջ շարժվելով՝ Հայաստանը պետք է շարունակի իր ջանքերը՝ խթանելու ներառական և կայուն տնտեսական աճը, ստեղծելու արժանապատիվ աշխատանքի հնարավորություններ և նվազեցնել աղքատությունն ու անհավասարությունը: Երկիրը պետք է կենտրոնանա նաև սոցիալական պաշտպանության իր ծրագրերի ընդլայնման, հիմնական ծառայությունների հասանելիության բարելավման և կառավարման հիմնական և ինստիտուցիոնալ մարտահրավերների լուծման վրա:

### **Էներգաարդյունավետության:**

Էներգաարդյունավետության առումով Հայաստանը կանգնած է մարտահրավերների առաջ՝ հնացած ենթակառուցվածքների և ժամանակակից տեխնոլոգիաների մեջ ներդրումների բացակայության պատճառով:

Վերջին տարիներին Հայաստանի կառավարությունը քայլեր է ձեռնարկել էներգաարդյունավետությունը բարելավելու ուղղությամբ, ինչպիսիք են էներգաարդյունավետության ծրագրերի իրականացումը պետական և մասնավոր հատվածներում և շենքերի էներգաարդյունավետության կանոնակարգերի ներդրումը:

Որպես լավ կառավարման օրինակ՝ Աշխարհը կտրամադրի 40 միլիոն ԱՄՆ դոլար՝ աջակցելու Հայաստանի համար էներգետիկ անցումային ծրագրին, որը կօժանդակի [Հայաստանի Հանրապետության էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարության իրականացմանը մինչև 2040 թվականը](#): Ներդրումները կկենտրոնանան էլեկտրահաղորդման ենթակայանների վերականգնման, բարեփոխումների ընդունման վրա, որոնք թույլ կտան հաղորդող ընկերությանը մուտք գործել մասնավոր ֆինանսավորում, և էներգետիկ ոլորտի արդիականացման խթանումը, ինչպես նաև Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի զարգացող և զարգացող տնտեսությունների միջև տարածաշրջանային էներգետիկ համագործակցությունը: շրջան:

Հայաստանի էներգետիկայի ոլորտը մեծապես կախված է ներկրվող վառելիքից, հատկապես բնական գազից, որը ստեղծում է էներգետիկ անվտանգության զգալի ռիսկեր, որոնց ավելանում է համաշխարհային էներգետիկ ճգնաժամը: Մասնավոր ներդրումների ներգրավումն էական նշանակություն ունի ոլորտում անհրաժեշտ լայնածավալ ծրագրերի

